

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՂԱՇՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78-Լ

21/07/2015թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՂԱՇՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻԱՄ ԽՈՐՀՐԴԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 59-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կանոնադրությամբ՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհուրդը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 2015 թվականի մարտի 31-ի ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից մասնագիտական գիտելիքների ստուգման» RL 1-045 կանոնները հաստատելու վերաբերյալ» թիվ 59-Լ որոշմամբ հաստատված ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից մասնագիտական գիտելիքների ստուգման» RL 1-045 կանոններում (այսուհետ՝ Կանոններ) կատարել լրացում և փոփոխություններ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշմամբ Կանոններում կատարված լրացումը և փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման օրվան հաջորդող օրը:

**«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ՝**

Ներսես Երիցյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
«__» _____ 2015թ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Ներսես Երիցյան

_____ Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-045

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻԱՄ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ)
(ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1. 7-րդ կետի 5-րդ ենթակետը «տվյալները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշը» բառերով:

2. 9-րդ կետից հանել «յուրաքանչյուր ոլորտում» բառերը:

3. 12-րդ կետում «ենթակա չեն հրապարակման» բառերը փոխարինել «և դրանց հրապարակումը» բառերով:

4. 14-րդ կետում «Հավելված 1-ով նախատեսված համապատասխան թեմաների շրջանակում կազմված 25-ական հարցերից՝ ըստ յուրաքանչյուր ոլորտի,» բառերը փոխարինել «3-րդ կետով նախատեսված մեկ կամ մի քանի ոլորտների (ըստ դիմորդի ցանկության) շրջանակում Հավելված 1-ով նախատեսված համապատասխան թեմաներից կազմված 25-ական հարցերից» բառերով:

5. 15-րդ կետում «Թեստի հարցերին պատասխանելու համար դիմորդին տրվում է թեստում ներառված հարցերից յուրաքանչյուրի հաշվով մեկական» բառերը փոխարինել «Թեստում ներառված յուրաքանչյուր ոլորտի շրջանակում կազմված հարցերին պատասխանելու համար դիմորդին տրվում է 60» բառերով:

6. 21-րդ կետում «80» թիվը փոխարինել «70» թվով: